

«Հաստատում եմ»

Շիրակի մարզպետի անվան պետական
համալսարանի ռեկտոր Ե. Սերոբյան

«13» փետրվարի 2025թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Նարե Արթուրի Ղազարյանի «Ավագ դպրոցում գեղագիտական արժեքների
ձևավորումը որպես մաթեմատիկայի ուսուցման հիմնախնդիր» վերնագրով ԺԳ.00.02
թվանիշով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (մաթեմատիկա)»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության մասին:

Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթության կարևոր
նպատակներից է, որը նպատակաուղղված է նրանց ներդաշնակ, բազմակողմանի
զարգացմանը: Արժեհամակարգի կարևորագույն բաղադրիչներից են գեղագիտական
արժեքները, որոնց ձևավորման հարցում բացի հումանիտար ցիկլի առարկաներից,
մեծ է նաև մաթեմատիկայի կրթական ներուժը:

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում սովորողների գեղագիտական
արժեքների ձևավորման հարցը ուսումնասիրվել է տարբեր հետազոտողների կողմից:
Սակայն նրանց հետազոտություններում, այս ուղղությամբ հատուկ ավագ դպրոցին
նվիրված ուսումնասիրությունները բացակայում են: Մինչդեռ այստեղ, հոսքային
ուսուցմամբ պայմանավորված, հիմնախնդիրն ունի մի շարք
հոգեբանամանկավարժական առանձնահատկություններ: Այդ
առանձնահատկությունների բացահայտմանն ու հոսքային ուսուցման

պայմաններում սովորողների գեղագիտական արժեքների ձևավորման արդյունավետ ուղիների մշակմանն է նվիրված սույն ատենախոսական աշխատանքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից:

Ներածության մեջ ատենախոսը հիմնավորել է հետազոտության արդիականությունը, հստակորեն սահմանված են հետազոտության բաղադրիչները՝ օբյեկտը, առարկան, նպատակը, հետազոտության խնդիրները, գիտական վարկածը, գիտատեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնք բովանդակային առումով համապատասխանում են ընտրված թեմային և տրամաբանորեն փոխկապակցված են:

Ատենախոսության *«Մաթեմատիկայի ուսուցման գործընթացի գեղագիտական ներուժի բացահայտման տեսական հիմունքները»* խորագրով առաջին գլխում վերլուծված է պատմական տարբեր դարաշրջաններում փիլիսոփաների, գեղագետների ու մանկավարժների առաջադրած դրույթները մաթեմատիկական գեղեցիկի վերաբերյալ: Քննարկված են հետազոտության հիմնախնդրին առնչվող մի շարք այլ հիմնահարցեր, հանգամանալից վերլուծված է «գեղեցիկը» եզրույթը, մաթեմատիկայի ուսուցման գործընթացի գեղագիտական ներուժի բացահայտման հիմնախնդրի վերաբերյալ մաթեմատիկների, մանկավարժների մեթոդաբանական մոտեցումները, տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները: Ելնելով հիմնախնդրի վերաբերյալ մի շարք խոշորագույն հետազոտողների տեսական և հայեցակարգային մոտեցումներից՝ դիտարկվել և ուրույն ձևով մեկնաբանվել են ավագ դպրոցում մաթեմատիկայի ուսուցման գործընթացում գեղագիտական արժեքների ձևավորման առանձնահատկությունները:

Ատենախոսության *«Ավագ դպրոցում գեղագիտական արժեքների ձևավորման խնդիրը մաթեմատիկական կրթության զարգացման արդի միտումների համատեքստում»* խորագրով երկրորդ գլխում ատենախոսը ներկայացնում է հումանիստական կրթության պայմաններում գիտական գեղեցիկի ձևավորման խնդիրը: Մեկնաբանվում են երկու մոտեցումներ՝ հումանիստական մաթեմատիկայի ուսուցումը և մաթեմատիկայի հումանիստական ուսուցումը: Կատարված է տարբեր հոսքերի դասագրքերի, ուսումնական ծրագրերի վերլուծություն: Ներկայացված է արժեքավոր եզրահանգումներ. առաջարկվում է այլընտրանքնային ծրագրերի

ատկայությունը, որոնցում շեշտադրված կլինի նաև գեղագիտական արժեքների ձևավորման խնդիրը:

Շեշտագուծվել է նաև գեղեցիկի ձևավորման խնդիրը մաթեմատիկական կրթության ինֆորմատիզացիայի պայմաններում: Ներկայացվել են ՏՀՏ գործիքների օգտագործման դրական և բացասական կողմերը, ինֆորմատիզացիայի պայմաններում արժեքների և արժեքային կողմնորոշումների ձևավորմանը նպաստող խնդիրներ, կատարվել է հետազոտություն, ներկայացվել կայքեր, որոնցից կարող են օգտվել մաթեմատիկայի ուսուցիչը և աշակերտները: Ատենախոսի կողմից առաջարկվել են թեորեմների, խնդիրների և հետազոտական աշխատանքների կատարման նմուշօրինակներ, դասերի թեմատիկ պլանավորումներ, որտեղ ցուցադրվել են ՏՀՏ գործիքների և ծրագրերի հնարավորությունները՝ գեղագիտական արժեքների ձևավորման տեսանկյունից արդյունավետ և հետաքրքիր դասեր կազմակերպելու համար:

Այնուհետև բացահայտվել է ինտեգրված ուսուցման առավելությունը գեղագիտական արժեքների ձևավորման տեսանկյունից: Ատենախոսի կողմից մշակվել են ինտեգրված թեմատիկ միավորների նմուշօրինակներ: Ներկայացվել է նաև ֆինանսական կրթության իրականացման պայմաններում գեղեցիկի ձևավորման հնարավորությունները:

Ատենախոսության երրորդ՝ *«Ավագ դպրոցում գեղագիտական արժեքների ձևավորման ուղիները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում»* խորագրով գլխում ատենախոսը, ընդհանրացնելով տարբեր հետազոտողների մոտեցումները, ըստ դրա, խնդիրների ուսուցման մեթոդիկաների նկարագրության միջոցով լուսաբանում է խնդրի, դրա ուսուցման և գործառույթների գեղագիտական գրավչությունը, և ցույց տալիս, թե ինչպես է այդ գրավչությունը տարբեր կերպ դրսևորվում ավագ դպրոցի հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերում:

Շաշվի առնելով այն փաստը, որ հավանականային նյութի ուսուցման գեղագիտության բացահայտման ուղղությամբ չկան բավարար ուսումնասիրություններ, հատկապես երբ խնդիրը դիտարկում ենք հոսքային ուսուցման պայմաններում, ատենախոսը ներկայացնում է ստոխաստիկական խնդիրների այնպիսի լուծումների իրականացումը, որոնց քայլերում երևում են

գեղեցիկի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, ինչպես նաև «գեղեցիկ խնդրին» վերագրվող պահանջները:

Արժեքավոր է, այս գլխում ատենախոսի կողմից ներկայացված «Ցուցիչներ և լոգարիթմներ» մոդուլը, որի ուսուցման ընթացքը ուղղորդված է դեպի գեղագիտական արժեքներ:

Մանրամասնորեն նկարագրված են մանկավարժական գիտափորձի փուլերը, ներկայացված են արդյունքներն ու դրանց վերլուծությունները, կիրառված հարցախույզների բովանդակությունը:

Ատենախոսության վերջում բերված եզրակացությունները արտացոլում են հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության վարկածը և պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Այսպիսով, ատենախոսությունը ամբողջական, ինքնուրույն, արդիական հետազոտություն է, որում արտացոլված են հեղինակի մասնագիտական գիտելիքները, հետազոտական և ստեղծագործական կարողությունները: Աշխատանքում նախանշված մոտեցումները, մշակված մեթոդական նյութերը կարող են լիարժեք օգտագործվել ավագ դպրոցում մաթեմատիկայի ուսուցման գործընթացում: Նրանում առաջարկվող տեսական, մեթոդական, հայեցակարգային դրույթներն ու մոտեցումները բավարար հիմք են հանդիսանում բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում սովորողների գեղագիտական արժեքների ձևավորման ուղղությամբ իրականացվող հետազոտությունների համար:

Ատենախոսական աշխատանքի վերաբերյալ կան հետևյալ դիտարկումները.

- ✓ «Գիտական գեղեցիկի ձևավորման խնդիրը մաթեմատիկական թեմաների ինտեգրված ուսուցման գործընթացում» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է ինտեգրված թեմատիկ միավորի նմուշօրինակ, որը վերաբերում է տրամաբանության տարրերի և ստոխաստիկական նյութի ինտեգրված ուսուցմանը, և կարճաժամկետ նախագծային աշխատանքի նմուշօրինակ: Մինչդեռ «Համաչափություն» թեմայով միջառարկայական բնույթի ինտեգրման նմուշօրինակը ներկայացված է հավելվածի տեսքով: Այնինչ, մեր գնահատմամբ, վերջինս իր բնույթով առավել արժեքավոր է և արժեր ներառել վերոնշյալ ենթագլխի բովանդակության մեջ, իսկ կարճաժամկետ նախագծային աշխատանքի նմուշօրինակը ներկայացնել հավելվածի տեսքով:

- ✓ «Մանկավարժական գիտափորձի դրվածքը և դրա արդյունքները» ենթազխում ատենախոսը ուսուցիչների, հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերում սովորողների «գեղեցիկ խնդրի» վերաբերյալ ընկալումների մասին պատկերացում կազմելու նպատակով առաջադրել է մաթեմատիկական խնդրի մի շարք բնութագրիչներ, որոնցից ուսուցիչը և սովորողը ընտրություն է կատարել: Կարծում ենք, ատենախոսը ընտրված թիրախային խմբերում «գեղեցիկ խնդրի» ընկալման վերաբերյալ առավել խորքային պատկերացում կունենար, եթե ուսուցիչները և սովորողները իրենք ներկայացնեին «գեղեցիկ խնդրի» օրինակ և բնութագրեին, թե ինչո՞ւ է այն գեղեցիկ:
- ✓ «Գիտական գեղեցիկի ձևավորման խնդիրը ֆինանսական կրթության իրականացման պայմաններում» խորագրով ենթազխում ատենախոսը դիտարկում է ֆինանսական բովանդակությամբ տեքստային խնդիրներ և լուսաբանում դրանց ուսուցման գեղագիտական գրավչությունը: Մեր կարծիքով, այս խնդիրները կարող էին առանձին դիտարկման նյութ չհանդիսանալ և ներառվել այն ենթազխում, որը վերաբերվում է խնդիրների ուսուցման գործընթացում մաթեմատիկայի գեղագիտական գրավչության բացահայտմանը:
- ✓ Շարադրման լեզուն հիմնականում հստակ է, սակայն առկա են որոշ վրիպակներ (Օրինակ՝ էջ 37, 50, 113):

Նշված դիտարկումները չեն ստվերում սույն հետազոտության գիտական արժեքը: Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին և Նարե Արթուրի Ղազարյանը արժանի է իր հայցած ԺԳ.00.02 թվանիշով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (մաթեմատիկա)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:


Կարծիքը քննարկվել և ընդունվել է «Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ» ամբիոնի՝ 2025թ.-ի փետրվարի 7-ի թիվ 8 նիստում:

Նիստին մասնակցել են ամբիոնի վարիչի ՊԿ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Մարգարյանը, ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Մարգսյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Սողոյանը, ֆիզմաթ

գիտությունների թեկնածու, դոցենտ Գ. Հայրապետյանը, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Մուրաֆյանը, ֆիզմաթ գիտությունների թեկնածու Ս. Վարդանյանը, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն. Հարությունյանը, մանկավարժական գիտությունների թեկնածուներ Ա. Սարուխանյանը, Ն. Նազարյանը, դասախոսներ Պ. Նահապետյանը, Գ. Ասատրյանը:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների

ամբիոնի վարիչի ՊԿ, ֆ.մ.գ.թ., դոցենտ



Մ. Մարգարյան

Ամբիոնի վարիչի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար, կ.գ.թ., դոցենտ



Գ. Գոսեյնյան

